AUA Հայաստանի Ամերիկյան Համալսարան

Լոռու մարզի մարզպետ
պարոն Անդրեյ Ղուկասյանին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Մանուկեան Սիմոն
Գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի գործարար կառավարման մագիստրոսական ծրագրի ղեկավար,
համակից պրոֆեսոր Ալեքսանդր Գրիգորյանից

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Ղուկասյան

Համաձայն ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում եմ ինձ տրամադրել ՀՀ Լոռու մարզպետարանում 2016 թվականից մինչ օրս հետևյալ հաստիքները զբաղեցրած պաշտոնյաների կենսագրությունները (բացառությամբ ներկայումս տվյալ պաշտոնները զբաղեցրած անձանց, ում կենսագրությունը հասանելի է մարզպետարանի կայքում). մարզպետ, մարզպետի տեղակալ, մարզպետի խորհրդական (առաջին և երկրորդ), գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ: Տեղեկությունը խնդրում եմ տրամադրել էլեկտրոնային տարբերակով՝ հետևյալ հասցեով. aleksandr@aua.am:

Ցանկանում եմ տեղեկացնել, որ վերոհիշյալ տեղեկությունների անհրաժեշտությունը բխում է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) գիտնականների՝ համակից պրոֆեսոր Քնար Խաչատրյանի և իմ՝ համակից պրոֆեսոր Ալեքսանդր Գրիգորյանի կողմից իրականացվող հետազոտության պահանջից: Հետազոտությունը ուսումնասիրում է Հայաստանի բոլոր մարզերում գյուղատնտեսական զարգացման ծրագրերում ներգրավված պաշտոնատար անձանց կրթական և մասնագիտական ուղին:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ քաղաքացիների տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում, բացառությամբ լրացուցիչ աշխատանք պահանջող տեղեկատվության (30-օրյա ժամկետ): Ուստի, խնդրում եմ տեղեկություն ստանալու հարցումիս պատասխանել օրենքով սահմանված կարգով և ժամկետներում:

Տեղեկության տրամադրումը մերժելու դեպքում խնդրում ենք գրավոր տեղյակ պահել մերժման հիմքի մասին (հոդված 11) և հնարավորության դեպքում տրամադրել այն պետական մարմնի կամ պաշտոնատար անձի հասցեն, որին կարող եմ ուղղել հարցումս:

Կանխավ շնորհակալ եմ՝

04.02.19

Ալեքսանդր Գրիգորյան

Մանուկեան Սիմոն Գործարարության և տնտեսագիտության ֆակուլտետի
Գործարար կառավարման մագիստրոսական ծրագրի ղեկավար, համակից պրոֆեսոր

Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող., 40 շենք
Հեռախոս՝ +374 60 69 26 14
Էլ. հասցե՝ aleksandr@aua.am | www.aua.am

Հայաստանի ամերիկյան համալսարանի Մանուկեան
Սիմոն Գործարարության և տնտեսագիտության
ֆակուլտետի գործարար կառավարման մագիստրոսական
ծրագրի ղեկավար Ալեքսանդր Գրիգորյանից

ՀՀ, ք. Երևան 0019, Մարշալ Բաղրամյան պող., 40 շենք

Հասույթը գանձված է / Taxe percue

PO001911110512012 0AM

0019
04 DEC 2019
ՀԱՅԱՍՏԱՆ

Լոռու մարզի մարզպետ
պարոն Անդրեյ Ղուկասյանին

ՀՀ Լոռու մարզ, ք.Վանաձոր, 2001, Հայքի
հրապարակ

RR

RR274194159AM

ARMENIA
07 DEC 2019

06 DEC 2019

DEC 2019